



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 13 ՀՈԿՏԵՄԵՐ, 2014

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 147

ՆԵՐՔՈՂ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ

**Օ**րհնութիւն երգեցէք Տիրոջ:

Արդարեւ մեր Աստուծոյն ներքող երգել վայել է,  
հաճելի եւ վայելուչ օրհներգութիւն ընծայել:  
Ան է որ կը բժշկէ սրտաբեկները, եւ կը պատէ անոնց վերքերը:  
Մեծ է Տէրը եւ մեծագօր. սահման չունի անոր իմացութիւնը:  
Տէրը գետնէն կը բարձրացնէ խոնարհները,  
եւ մինչեւ գետին կը խոնարհեցնէ ամբարիշտները:  
Ինքն է որ երկինքը կը ծածկէ ամպերով,  
երկրին համար անձրեւ կը պատրաստէ,  
խոտ կը բուսցնէ լեռներուն վրայ:  
Իւրաքանչիւր անասունի իր ուտելիքը կու տայ,  
նոյնիսկ ագռաւներու ձագերուն, որոնք իրեն կը դիմեն:  
Տէրը չի փնտռեր մարդիկ՝ որոնք ձիուն զօրութեան կը վստահին,  
կամ կ'ապաւինին իրենց արագաշարժ ըլլալուն:  
Տէրը աստուածավախ մարդիկ կ'ուզէ,  
մարդիկ՝ որոնք իր սիրոյն կը վստահին:

## ՇԱՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՅ Դ. ԳԼՈՒԽՍ



## ԱՍՏՈՒԱԾ ՄՈՎՍԷՍԻՆ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ (4:1-17)

Հակառակ նախապես Աստուծոյ կողմէ փրուած ապահովութիւնը Մովսէսին, թէ «Անոնք քու ձայնիդ մտիկ պիտի ընեն» (3:18), բայց Մովսէս կ'ուզէ ձեռով մը փախուսար փալ, առարկութիւն կ'ընէ որպէսզի պարպականութենէ խուսափի: Մա ցոյց կու փայ, թէ Մովսէս հակառակ Աստուծոյ յայտնութիւնը ունենալուն, փակաւին իր խաղաղութիւնը չէ գրած, իր վրայ դրուած պարպականութիւնը ծանր կը թուի իրեն, որովհետեւ ոչ միայն ժողովուրդին առաջնորդը պիտի ըլլայ, այլ նաեւ Փարաւոնին հետ բանակցողը:

Երկու առիթներով կը փորձէ առարկել: Առաջին. կ'ըսէ. «Բայց անոնք ինծի պիտի չհաւաքան, ոչ ալ իմ ձայնս մտիկ պիտի ընեն»: Ահա այս առարկութեան դիմաց Տէրը իրեն երեք նշան կու փայ, որպէսզի անով հաւաքան իրեն: Երկրորդ առարկութիւնը, «Ես ճարտարախօս չեմ, հապա ծանրախօս եմ ծանրալեզու»:

Այսպէս կարելի է երկու հաւանականութիւն փեսնել. կամ այն է որ ֆիզիքական (բնախօսական) թերութիւն մը ունէր, կը կակազէր, որովհետեւ Տէրը անմիջապէս կը պարասխանէ. «ով ըրաւ համրը կամ խուլը», այսինքն՝ Աստուծոյ կրնայ այդ թերութիւնը վերացնել: Բայց երբ յետագայ պարմութեան կ'անդրադառնանք պիտի փեսնենք որ յաճախ ժողովուրդին հետ խօսողը Մովսէս ինք էր: Երկրորդ հաւանականութիւնը այն է, որ ճարտարախօս չէ, այսինքն իր միտքը համոզիչ կերպով արտայայտելու դժուարութիւն ունի: Ահա այդ իսկ պարճառով Աստուծոյ կը գործածէ կերպ մը, որ կ'օգնէ Մովսէսին, երբ Ահարոն անոր իբրեւ օգնական կը նշանակուի, բան մը որ սկզբնական շրջանին համար քաջալերանքի ձեւ մը պիտի ըլլար Մովսէսին համար մինչեւ ինքնավարաւորութիւն ձեռք ձգելը: Որովհետեւ չնոռնանք այն պարագան, որ Աստուծոյ ժառանգ Մարտանը երբեք մարդիկը չի ներկայացնէր իրեալական իրենց ձեւին մէջ, այլ այնպէս ինչպէս որ են, որ կը նշանակէ վարանումներ, որ մարդկային փրկութեան պարճառով է: Ուրեմն, ժամանակ պէտք է, որպէսզի մարդը, այս պարագային Մովսէս Աստուծոյ կրակին մէջ լաւապէս պարաստուի իր վարանումներն ու փրկութիւնները երկրորդական մակարդակի իջնելու եւ վարաւորութիւն ձեռք ձգելու:

Եթէ երբեք Մովսէս 40 փարիներ անապարին մէջ ունէր գաւազան մը արածելու համար իր անէրոջ ոչխարները, հիմա այդ գաւազանը կը դառնայ հովուելու Իսրայէլի ժողովուրդը: Այդ գաւազանով իրեն կը փրուի իշխանութիւն, առաջնորդի դեր: Միւս կողմէ, այս գաւազանը կը դառնայ խորհրդանիշ Քրիստոսի խաչին: Այնպէս ինչպէս Մովսէս այս գաւազանով պիտի հարուածէր Եգիպտոսը ու ժողովուրդը դուրս բերէր Եգիպտոսէն, նոյնպէս Քրիստոս Իր խաչով պիտի հարուածէր Չարին եւ անով ժողովուրդը ազատէր մեղքի սրբկութենէն: Գալով ձեռքին, բորոք ըլլալու եւ դարձեալ բժշկուելուն: Այս փրուեցաւ իբրեւ նշան, որպէսզի հաւաքան, բայց նաեւ անոր մէջ կայ խորհուրդը վերակենդանութեան: Իսկ ի վերջոյ, արիւնը՝ դարաստանի:

## ՄՈՎՍԷՍ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՂԱՌՆԱՅ (4:18-31)

Հեղափոխական համեմատութիւն մըն է Մովսէսի Եգիպտոս վերադարձը եւ Քրիստոսի աշխարհը գալը:

Ահա ճամբու ընթացքին Աստուծոյ կը յայտնուի անոր եւ կը փորձէ սպաննել անոր գաւակը, անոր անթիփապութեան պարճառով, բայց անոր կինը՝ Մեպփօրան աւելի արթուն, կը թիփարէ, եւ երկու առիթներով զինք կը կոչէ «արիւնոք ամուսին», այսինքն քիչ մնաց որ գաւկիս մահուան պարճառ պիտի ըլլայիր: Հեղափոխական միջադէպ մըն է: Թէեւ պարճառը չէ ըսուած բայց կարելի է հետեւցնել: Մենք գիտենք, որ Աստուծոյ Աբրահամին հետ ուխտ մը կնքեց, եւ այդ ուխտին իբրեւ նշան պարտէր փուս 8-րդ օրը թիփարելու իր գաւակը, իսկ ան որ չթիփարէ պիտի մեռնուի (Ծննդ 17:14): Արդեօք Մովսէս թիփարուած էր: Երկու պարագայ կայ: Կրնայ թիփարուած ըլլալ, երբ երեք ամիսներ իր ծնողները զինքը պահեցին ու դաստիարակեցին: Միւս կողմէ, երբ զինք գետը նետեցին այն յոյսով որ կրնայ փրկուիլ, նաեւ կարելի է որ չթիփարեցին, որպէսզի չգիտնուի անոր երբայեցի ըլլալը: Ամեն պարագայի, Մովսէս գիտէր թէ ինք երբայեցի մըն է, եւ ծանօթ էր աւանդութիւններուն:

Ուրեմն իր գաւակը չթւփափելով, Աստուած երբ ուզեց սպաննել երեխան, անով ցոյց փալու կամ սորվեցնելու Մովսէսին, թէ երբ մէկը առաջնորդ պիտի ըլլայ ժողովուրդին, ինք նախ օրէնքը պէտք է յարգէ եւ ապա ժողովուրդին սորվեցնէ, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ իր աշակերտին Տիմոթէոսին. «հաւաքացեալներուդ օրինակ եղի՛ր՝ խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւաքովդ եւ մաքուր կենցաղովդ» (Ա Տիմ 4:12): Մանաւանդ որ թւփափութիւնը ոչ թէ միայն մարմնական իմաստով, այլ նաեւ հոգեւոր իմաստով փրուած էր:

Ի վերջոյ գալով անդրանկութեան հարցին: Թէ արդեօք Աստուած ինչո՞ւ Իսրայէլը ընտրեց իբրեւ անդրանիկ: Չմոռնանք, որ յաճախ Աստուծոյ ընտրութիւնները անբացատրելի, փարօրինակ եւ նոյնիսկ հակասական կը թուին ըլլալ մարդկային ըմբռնումին համար, որովհետեւ մեր մտքերը սահմանափակ են, մինչ Աստուած ամենագետ: Միւս կողմէ, նաեւ Աստուծոյ ընտրութիւնները բացարձակօրէն ազատ են, ինչպէս մարդկային կամքը: Ուրեմն, Աստուծոյ ընտրութիւնը կախում ունի, ոչ թէ ծնունդով անդրանիկը նախընտրելով, այլ՝ հաւաքարիմը: Ամէն պարագայի, Աստուած այդ ընտրութիւնը փեղէ մը պիտի սկսէր, եւ այս պարագային ով որ ալ ընտրուէր անպայման առարկութիւն պիտի ըլլար:

